



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի N°---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N°8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 30-րդ, 35-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N°374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» բաց բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունվարի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 20-ի «Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ին էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N°8 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Նարեկ-Լ.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2004 թվականի դեկտեմբերի 24-ի N°177Ա որոշմամբ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑՇԻՆ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ վերաձևակերպված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0084 լիցենզիայի (այսուհետ՝ N°0084 լիցենզիա) գործողության ժամկետը՝ Որոշման մեջ «15 տարի գործողության ժամկետով» բառերը փոխարինելով «մինչև 2032 թվականի փետրվարի 22-ը գործողության ժամկետով» բառերով:

2. N°0084 լիցենզիայի պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ցեմենտի գործարանի տեխնիկական ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության և տեխնիկական ջրատարի օգտագործման (ջրատարից օգտվելու) կամ ջրատարին միանալու պայմանագրի (թույլտվության) պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված փաստաթղթերի պատճենները նույն ենթակետով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուժանք:

4. Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ